ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ Արտոնագիր 707

CHAMBRE DES AVOCATS DES LA RA CHAMBER OF ADVOCATES OF RA

ք. Երևան, Հս/Ամտ Վ-3, տ 106 harutyunbaghdasaryan.adv@gmail.com

27.04.2026թ. 024-/Դ-26 հեռ. 093-144-282

Արարատի մարզի դատախազություն
Մարզի դատախազ՝ Վարդան Գուրգենի Պողոսյանին
Արարատի մարզ, ք. Արտաշատ, Մարքսի 2
Հեռ՝ 010 311-261, Էլ. հասցե՝ ararat@prosecutor.am

Արարատի կայազորի զինվորական դատախազ՝
Արտաշես Ասատուրի Ոսկանյանին
Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Անդրանիկի 4
Հեռ՝ 010 311-390, Էլ. հասցե՝ ararati-kayazor@prosecutor.am

Հաղորդում հանցագործության մասին

Հայանիստ գյուղի բնակիչ Արտակ Ավետիսյանն ԱՀԱՋԱՆԳԵԼ է. **Զինվորական նոր հագուստը ոչնչացրել են[1].**

Լրագրող **Սյուզի Բաղոյանն** անդրադարձել է այդ ահազանգին:

#Քանակին ուղարկված, բայց զինվորին չհասած օգնություն համազգեստն արժե 100 եւ 52 դոլար
👇հանցագործները պիտի պատժվեն
Փարաքարի դաշտերում թաղած օգնության ծավալն ահռելի էր, մի մասը Արտակի ահազանգից հետո գիշերով գաղտագողի եկան թաղեցին, մյուսներն էլ դրանք են նույնականացրել ենք օնլայն հարթակում
Խնդրեմ:
Ի դեպ դրանք ամերիկյան են[2]:

Սա ենթադրվում է օգնությունն է, որը պատերազմի օրերին տեղ չի հասել: Երեկ թաքուն բերել թափել են գյուղի գլուխ, հետո Արտակի ահազանգից հետո գիշերը էքսկավատորով բերել թաղել են ծածուկ, որ հետքերը վերացնեն

Hayots Vostan
Ա՛յ, Էսպես ու ԱՓԱՇՔԱՐԱ ԷԼ Երկիրս են ՊԱՍԵՐՈՎ ՔԱՆԴՈՒՄ:
Vazgen Khachatryan
Պատկերացնու՞մ եք սա նախկինների ժամանակ կատարված լիներ: 100 տարի կզռռային զոմբիներն ու երեսով կտային. իսկ իրենց թուրքի ցռթած դավաճանին սրբադասում են պիղծ ոչխարները...:
Сатен Минасян

[1] https://www.youtube.com/watch?v=Ynk2UnsIH-Q

[2] https://www.facebook.com/syuzi.badoyan/posts/pfbid0RRLdMJoe8y QRRmYuiZGHL8PQ1hBQU8df5792gJeFfXSsvEAriHXWzXAiRxJxMFVFl

և ինչքան օգնություններ մնացին տամոժնիայի պահեստներում, իրանց տատու արած աչոնիկն էլ պարտկեց
Армина Мелоян
Փնթիները իրենց պադվալներն են դատարկում, ահա թե ինչ է լինում , երբ չտես, սոված թափառախումբը իշխանություն է դառնում:
Անուշ Վասիլիի Աթաջանյան
Աշխարհը նման տականքներ չի տեսել
Ararat Voskanyan
Գնդակահարություն' ամենաճիշտ ազգը մաքրվելու ձևը!
Andranik Soghomonyan
88թ երկրաշարժի օգնությունների ժամանակ գյուղապետերից մեկն ասել էր.
_ Եթե այսպիսի մի երկրաշարժ էլ որ լինի, ծոռից_ծոռ հագուստով ապահոված կլինեմ:
Երկու բեռնատար չօգտագործած հագուստեղեն պադվալս եմ լցրել, մեկն էլ՝ հարազատներիս եմ բաժանել:
Այո, չզարմանանք մարդկանց այս տեսակների վրա, որ երբ ասում են.
_ Վախ, աչքս դուրս եկավ,
ասում է. _ Տուր, տանեմ կատվիս տամ:
Aida Hovhannisyan
Դժվար չէ հողի շերտը հետ տալ ու հանցագործության հետքերը բացել:Դատախազությունն ու Կարմիր խաչն էլ թող հետևողական լինեն.բացահայտեն կատարվածը ու հանրությանը տեղեկացնեն (ո՞վ, ե՞րբ, որտե՞ղ, ինչու՞):
Galust Nanyan
Այստեղ ԱՄՆ-ում ծանոթներիցս մեկին հանդիպեցի, ով մեկ տարի առաջ գնացել էր օդանավակայանի Կարգո փաթոթը ստանալու...
Պատմեց, թե ինչքան օգնություն կա, որ առգրավված է, ու դրա մեծ մասը հասել է Կարգո 44-օրյա պատերազմի ժամանակ ու չի բաշխվել...
Մի պահ քարացել էի , լավ էսքան անԱստված, որ սրանք են...
Милена Ароян
Աստծո պատժին արժանանան
Рузанна Мкртчян
Էս օգնության մասին մի Ազնիվ մարդ երկու տարի առաջ էր ասել:
Emma Galstyan
Ջոմբիներ տեսնո՞ւմ եք գոնե
Վարսիկ Թաիրյան
Էս երևի էն օգնությունն է որ ուղարկել էին դրսից ,որը այդպես էլ տեղ չհասավ ու որի համար ուղարկող անձինք բարձրաձայնել էին:
Այ զոմբլա եզեր նաեք, ոչինչ սրա համարել եք հաշիվ տալու:
David Serobyan
Էս ազգի դավաճանության հոդվածա: Կասեք ում եք դիմել, ով է այդ հարցով զբաղվելու:
Tanya Kinésithérapie Lyon
Պահել էին որ ծախեն չի ծախֆել բերել թափել են
Gayane Azatyan
Վերից վար կախեք
Μαρινα Εφραιμιδου-Βασιλιαν
Դավաճանության հետքերն են թաքցնում

Տեսաձայնագրությունից[3], լրագրողի հարցերից և ներկաների պատասխաններից, ինչպես նաև ֆեյսբուքյան մեկնաբանություններից կարելի է ենթադրել, որ ցուցադրված առարկաները պատերազմի ժամանակ որպես օգնություն ստացված զինվորական պարագաներ են (հագուստ, հակագազ, զրահաբաճկոն և այլն):

[3] Արևաշատի դաշտերում հայտնաբերվել է զինվորական գույք

https://www.facebook.com/reel/1318405866767659

https://www.facebook.com/syuzi.badoyan/videos/4252240591689431/

Գտնում եմ, որ առարկա են.

- ՀՀ քր.օր. 264 հոդ. 3-րդ մասի 1-ին կետով ամրագրված հանցակազմը, այն է. *Ուրիշի գույքը ոչնչացնելը կամ վնասելը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից*, քանի որ հնարավոր չէ, որ այդքան ապրանքը մի անձի կողմից ոչնչացված լինի:
- ՀՀ քր.օր. 265 հոդ. 1-ին մասով ամրագրված հանցակազմը, այն է. *Գույքի պահպանության կամ պաշտպանության պարտականություն ունեցող անձի կողմից այդ պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը դրանց նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, եթե այդ անձի անզգուշության հետևանքով տեղի է ունեցել այդ գույքի խոշոր չափերի հասնող հափշտակում, վնասում կամ կորուստ, և եթե չկան հանրային ծառայության դեմ ուղղված հանցագործության հատկանիշներ:*

ՀՀ քր.դատ.օր 173 հոդ. 1-ին մասի 1-ին կետի համաձայն.

1. *Քննիչն իր իրավասության սահմաններում պարտավոր է քրեական վարույթ նախաձեռնել, եթե առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդումը ստացվել է՝*

1) ֆիզիկական անձից.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն.

2. *Համապատասխան հաղորդումը համարվում է առերևույթ հանցանքի մասին, եթե դրանով փաստվում է այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական*:

Սույն հաղորդումը տրվում է նաև ՀՀ քր.դատ.օր 173 հոդ. 4-րդ մասով նախատեսված հիմքով, համաձայն որի.

4. *Զանգվածային լրատվության միջոցներում առերևույթ հանցանքի մասին հրապարակված տեղեկությունները քննիչի համար կարող են քրեական վարույթ նախաձեռնելու առիթ լինել*:

ՀՀ քր.դատ.օր. 174 հոդ. 2-րդ մասի պահանջների պահպանմամբ հայտնում եմ նաև իմ ծննդյան թիվը՝ 08.01.1965թ.:

Այսպիսով՝ հաղորդման մեջ ներկայացված են այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք առերևույթ համընկնում են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժի սպառնալիքով արգելված ցեղասպանության, տեղահանման, վանդալիզմի, սովի մատնման սպառնալիքի և այլ արարքների հատկանիշներին:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ արձանագրում եմ. *ներկայացված հաղորդմամբ փաստվել են այնպիսի դեպքեր ու գործողություններ, որոնց ողջամտորեն կարող էր տրվել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված երկու արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական:*

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով ՀՀ քր.դատ.օր. 173 հոդ. կանոններով, դիմում եմ Ձեզ ու միջնորդում.

- Հաղորդումն ուղարկել քննչական վարչություն ու հանձնարարել նախաձեռնել քրեական վարույթ:

Հարգանքով՝ փաստաբան  Հարություն Բաղդասարյան

Հ.Հ. Գլխ. դատախազ
Աննա
վարդապետյան
Պահանջում եմ
Սփյուռքից հայ զինվորներին ուղարկված և աղբի պես թափված օգնության առիթով անմիջապես հարուցել քրեական գործ և բացահայտել մինչև ընտրություններ
առաջին հերթին դա դա բխում է ձեր անձնական շահերից
տարածեք և միացեք իմ պահանջին